

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

17.10.2021թվականին կայացավ Հարթագյուղի միջնակարգ դպրոցի մանկավարժական խորհրդի նիստ՝ Նիստին մասնակցում էին խորհրդի 19/տասնինը/ անդամ, բացակա 1 /մեկ/ :

ՕՐԱԿԱՐԳ

Հարթագյուղի միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնի մրցույթի հավակնորդի զարգացման ծրագրի քննարկում և քվեարկության կազմակերպում:

/Զեկ. Ս.Հունանյան/

Լսեցին - Հարթագյուղի միջնակարգ դպրոցի տնօրենի մրցույթի հավակնորդի զարգացման

Ծրագիրը քննարկվեց և փակ քվեարկություն կազմակերպվեց:

/Զեկ. Ս.Հունանյան/

Դպրոցի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի համար հայտ է ներկայացրել մեկ հավակնորդ՝ Սամվել Սերյոժայի Հունանյանը, ով ներկայացրեց իր կողմից կազմած զարգացման ծրագիրը:

Զարգացման ծրագիրը կազմված էր ինը կետից, որոնց վերաբերյալ հավակնորդը ներկայացրեց պարզաբանումներ: Ծրագիրը ներկայացնելուց հետո տեղի ունեցավ փակ քվեարկություն: Քվեարկության արդյունքում հավակնորդի օգտին քվեարկել է կողմ-18 ձայն, դեմ -0 ձայն:

Ելնելով քվեարկության արդյունքներից մանկավարժական խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

Հավակնորդ Սամվել Սերյոժայի Հունանյանին համարել Հարթագյուղի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի կողմից ընտրված տնօրենի թեկնածու:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝  / Ս.Հունանյան/

